

ըից մէկը զրուած է յունարէն, միւսը — յունարէն և պահ-
լաւերէն, իսկ երրորդը միայն պահլաւերէն (այս վերջին
փաստագիրն դժուարութեամբ է կարգացուում)։ Առաջին
երկուսի բնագիրը վերագրում են 88 և 22 թուերին Գրիս-
տոսից առաջ (այդ թիւը համեմատ է Արշակունիների թա-
ղաւորութեան տարիներին)։

Այս գիւտը հետաքրքրական է զանազան կողմերից։
Առաջին նա կարող է լոյս սփռել այդ տեղերի հողային հար-
ցի վրայ, որ այնքան քիչ բան գիտենք այդ շրջանի մասին,
զուցէ և այդ փաստագրերի ուսումնասիրութիւնը կը շո-
շափի և այն առեղծուածները, որոնց մասին մօտիկ ան-
ցեալում այնքան հիմնաւոր և ինքնուրոյն կերպով ձառում
էր մեր հայրենակից Մ. Ի. Բոստովցեֆն իւր հոգովմէական
գաղթականութեան պատմութեան վերաբերեալ գերմանա-
կան աշխատութեան մէջ։ Էլլենական պատմաբանների և
լեզուագէտների համար հետաքրքրական է յունական քա-
ղաքակրթութեան կենդրոնից հեռու այդ հեռաւոր երկրի
յունական փաստագրերի հնագրութիւնը։

Բերլինի մասնագէտ զոհտոր Պլատման հաղորդել է ինձ,
որ նորա առաջին տպաւորութեամբ (Բերլինում ստացուած
են լուսանկար օրինակները վերոյիշեալ փաստագրերի) այդ
բնագրերի գիրը յիշեցնում է Եգիպտոսից բերուած հնագոյն
Պտղոմեան շրջանի յունական փաստագրերի գիրը (համարեա
գլխազիր)։ Ըստ երևոյթին, յունական արագագրութեան
զարգացումն այդ քիչ էլլենացած տեղերում ընթացել է
զանդաղ, քան թէ ուժեղ էլլենացած Եգիպտոսում։

Բ. Վ. Ա.

ՄԱՁԴԻԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՐԴԻ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

(Մազղագնան)

Շնորհիւ դաւանանքների ազատութեան Եւրոպայում աճում՝
բազմանում են զանազան տեսակի աղանդներ՝ սէկտաներ, մեթո-
դիստ, աւետարանական, ազգային եկեղեցի, և այլն, և այլն,.....
Այդ սէկտաներից մէկն էլ է Մազղագնանը, (մազղէականութիւն)
որ ուզում է լինել Զարաթուստրայի աւանդած իսկական կրօնը։

Դր. Հանիշը (Ծն. 19 XII 1844), որ անցրել է իր մանկութիւնը Պարսկաստանի զրադաշտականների տաճարում, տարել է այդ վարդապետութիւնը (Մազդազնան անունով) 1900 թւին Չիկագո (Միաց. Նահանգ.): Այդտեղից 1906-ին գլխգերիացի պ. Դաւիթ Ամմանը բերում է Լայպցիդ: Առաջին Լօժը հիմնում է ուրեմն Լայպցիգում, որ և դառնում է Եւրոպայի Մազդազնական շարժման կենտրոնը: Այդտեղից սկսում է արագ տարածւել Գերմանիայում (25 քաղաքներ), Աւստրիայում (5 քաղաքներ) և Զուիցերիայում (7 քաղ.):

Տեսնենք թէ ինչ է այդ մազդազնական վարդապետութիւնը և ինչու է այդպէս արագ զարգանում:

Պատաստուած հօգը: Քաղաքակրթութեան և տեքնիկայի զարգացումով կեանքը շարունակաբար բարդանում է, գոյութեան կռիւը աւելի է դժուարանում: Մարդիկ այլևս իրար հետ ֆիզիքական ոյժով չեն շարժուում՝ այլ մտաւոր ընդունակութիւններով: Վայնրան որ յոգնած՝ սպառուած նեարդեր ունի. նա կեանքի պայքարի մէջ ոտնատակ է զնում. առողջ, կայտառ անհատները կօխ են տալիս վրան և անցնում, առանց ուշադրութիւն դարձնելու:

Իւրաքանչիւր ձեւնարկութիւն (լինի տեքնիկական, արդիւնարերական կամ վաճառականական) պահանջում է գործաւորներից և պաշտօնեաներից մի շարք ծանօթութիւններ, հեռաստուութիւն, դատողութիւն, պատասխանատուութիւն և այլն... Հետևաբար այս պաշտօնները սպառում են շատ նեարդային էներգիա (Nervenkraft): Նեարդային լարուած դրութիւնը շարունակուելով թոյլ սխտեմները սկսում են քայքայուել... անհատը թուլանում, ուժասպառ է դառնում, և պայքարից յետ քաշուում...

Կօնկուրէնցը շարունակուում է... միշտ նոր, թարմ ոյժեր են ասպարէզ գալիս, իսկ թոյլերն ու յոգնածները վայր գլորուում... և այդպէս շարունակաբար...: Իրբև հետևանք դուրս է գալիս, Եւրոպական հասարակութիւնը կազմուած է մի շարք առոյգ և գործունեայ անդամներից և մի շարք Եւրոսիկներից, որոնք թողնում են միւսներին գործին ինչպէս կուզեն... Այդ ներտախկնիւթի թիւը շատ մեծ է (մանաւանդ մեծ քաղաքներում) և հէնց այդ բազմութիւնն է որ պատճառ է դարձել արդի «Վերլուծական հոգեբանութիւն» գիտութեան գոյութեան¹⁾:

Հետևանքներ: Մարդիկ դառնում են երազող, մեկամաղձու: Ուշադրութիւնը ցրում է, դատողութիւնը դանդաղանում, անհատը դառնում է պասիւ... Խանգարում են մարտողական և սեռային

1) Freud: Über die Psychoanalyse, Braudeutung, եւ այլն Fung, Pfiesler, adler, Steckel... Gerling: Die Kunst der Kouzentration.

գործունէութիւնները . . . Շատ ներուախիւններ զգում են, որ իրենք առողջ մարդկանցից մի աստիճան ցած են կանգնած. այդ զտղափարը շարունակաբար ճնշող և նուաստացնող ազդեցութիւն է անում:

Ահա այս պարագաներում երբ մէկը ամբիոն է բարձրանում և ցոյց է տալիս մի երջանիկ կեանքի հեռանկար. «Լինել առողջ, գիղեցիկ, եռանդուն, ընդունակ . . . կեանքը լինի հրճուանք, լիութիւն, զոհութիւն . . .» մարդիկ հայացքը այդպէս խօսողին ուղղած մեծ ուշադրութիւնով լսում են: Մազդազնանն է այդ խոստումներ անողը: Եւ նա տալիս է գործնական, հանրամատչելի միջոցներ նեարդերը առողջացնելու և առողջ պահելու համար. որովհետև չկայ երգանկութիւն առանց առողջ զղերի:

Միջոցներ: Տեսնենք որո՞նք են այդ հանրամատչելի միջոցները.

- 1) Երաժշտութիւն և շնչառութիւն
- 2) բուսակերութիւն և
- 3) սեռային վերածնունդ:

Այս վերջինը բռնում է ամենակարևոր տեղը: Այդ մասին Dr. med. Oberdöfster-ը գրում է. «Ժողովուրդների բարոյական—էթիկական անանկութեան և մարմնական ու հոգեկան թուլութեան միակ պատճառն է սեռային գործարանների տկարութիւնը»¹⁾ Թող սա չափազանցութիւն չը թուայ: Արդի հոգեբան անալիստներէ հետազօտութիւնները բերում են մեզ այն եզրակացութեան, որ սեռային գործնէութիւնը, բնախօսական միւս գործնէութիւններէ մէջ, ամենակարևոր տեղն է բռնում անհատական, ընտանեկան և հասարակական տեսակէտներէց: Բանաստեղծութիւն, գեղարուեստ, ոճրագործութիւն, քաջութիւն և այլն շատ սերտ կապուած են սեռային զրութեան հետ:

Արդ՝ Մազդազնանն ասում է. իւրաքանչիւր մարդ պէտք է սեռայնապէս վերածնուի: Այսինքն. փոխանակ սեռային գեղծերի սէկրէտիօնը արտաթորելու մի նոր կեանք ստեղծելու համար, պէտք է այդ հիւթերը մացնել արեան շրջանառութեան մէջ որ մարմնի բջիջները (Celle, cellule) բեղմնաւորուեն²⁾: Այդ ժամանակ միայն կը կարողանայ քայքայւած ջղային սխառէմը կազդուրուել և առողջանալ: Գիտականօրէն սա հասկանալի է: Իսկ գործնականօրէն . . . դեռ աւելի պարզ: Հազարաւոր մարդիկ որ յոգնած, ճնշուած, կեանքից ջախջախուած տնքում էին, հիմայ

1) Տկարութիւն՝ որ հետեւանք է չափազանց ուղեղային աշխատութեան, նեարդային լարուած դրութեան, ժառանգականութեան, քաղաքի ճակատողչապահական պայմանների, եւայն, եւայն. . .

2) Թէ ինչպէ՞ս, բացատրուած է հետեւեալ գրքում. Dr. Hänish, Wiedergeburt, Leipzig Mazdaznan—Verlag.

մազդազ. վարդապետութեան միջոցով, առողջացած, ուրախ, կեանքի պայքարն են մղում: Այդ մասին շատ վկայութիւններ կարելի է առլ, բայց մի այսպէս յօդուածում տեղը չէ:

Երաժշտութիւնը եւ ճնշառութիւնը: Գիտենք որ երաժշտութիւնը մեր նեարդերի վրայ ուղղակի ազդեցութիւն ունի (մանաւանդ երբ նեարդերը հիւանդ են): Չի կարելի միթէ այդ միջոցը զործադրել ջղախիւ խանդարումները բժշկելու համար: Մազդապետական երաժշտութեան նպատակն էլ դա է. բոլոր մեղեդիները սահում են դանդաղ, խաղաղ, քայքայուած նեարդերը շոյելով մեղմիկ, մեղմիկ . . . Ազդեցութիւնը ուժեղացնելու համար երաժշտութիւնը միացած է մարմնի որոշ շարժումների հետ:

Իւրաքանչիւր մէկը, առանց բացառութեան, պէտք է երգի և ամեն օր շնչառութեան մարզանքներ անի [Մազդապետականը տալիս է միջոցներ հիւանդ ձայները մշակելու համար]: Երաժշտութեան, շնչառութեան և մարմնամարզութեան զլիսաւոր նպատակն է միայն նեարդերի վրայ ազդել: Երբէք չի փնտռուում ուժեղ մկաններ կազմել¹⁾:

Մսակերութիւնը դարձնում է մարդկանց դիւրագրգիռ, կրքոտ և թունաւորում է մարմինը, խանգարում է ուղեղի և սեռային օրգանների գործնէութիւնը: Իւրաքանչիւր մազդապետականը հետևող պէտք է ամենից առաջ լինի բուսակեր: Իսկ բուսային սնունդները չի կարելի անհոգ կերպով գործ ածել. որոշ նիւթերի իրար հետ խառնուելով կարող է խմորում առաջ դալ: Արդ՝ յաճախ, խմորումից հետևում է թոյն (լինի պիօօլ կամ ուրիշ օրգանական թոյն): Գրա համար պէտք է իմանալ մի քանի դիտական պարզ օրէնքներ²⁾:

Կօնցեմսացիօն: Առողջ ուղեղ պահելու համար պէտք է որ մարդ միշտ իր անելիք գործի վրայ մտաւոր ոյժերով կենդրոնանայ: Օրինակ. ուտելու ժամանակ պէտք է զբաղուել միայն ուտելով և ոչ թէ երեւելայութիւնով թափառել ուրիշ աշխարհներում, և այլն և այլն . . . Նմանապէս երգելու, աղօթելու, մարմնամարզի ընթացքում զբաղուել միայն մի գործով: Այդպիսով մարզանքները, սուզեստիօն (աղօթք), ստիորելը, և այլն կը տան զբաղական արդիւնքներ:

Դօզմանքը: 1) Աստծոյ գաղափարի շուրջը չի վիճարանում: Անտարբեր գործ են ածում «Աստուած» և «բնութիւն» բառերը: Ոմանք ասում են որ աղօթելու, երգելու միակ նպատակն է ինք-

1) «Wir wollen keine Muskeln, sondern kräftige Nerven bilden» D. Ammann.

2) Diätetik von D. Ammann, Leipzig. 48-րդ տպագրութիւն 1912.

նասուզեցեալները (autosuggestion, selbstsuggestion): Կան և պարզամիտ կանայք որ կարծում են թէ ջրհեղեղ ու նման արկածներ ուղարկուած են Աստուծոյ մարդկանց մեղքերի դէմ... Թող ամեն մէկը մտածի այդ հարցի վրայ ինչպէս ինքը կուզի. կարեօրն այն է որ մարդ գոհ լինի իր կեանքից և հասարակութեան մէջ երջանիկ ապրի:

2) Իւրաքանչիւր անհատ ծնուել է մի որոշ դեր խաղալու համար, կամ հասարակութեան մէջ կամ իր շրջանում: Պէտք է ամեն երիտասարդ իմանայ իր կոչումը¹⁾, ըստ այնմ ընտրի իր արհեստը կամ զբաղմունքը և բոլոր ոյժերով դրա վրայ կենդրոնանայ: Իր միակ նպատակը դա պիտի լինի: Ուրեմն մազդ. հասարակութեան մէջ իւրաքանչիւր անգամ իր իղէալ-նպատակն ունի: Կեանքը սիկ չի:

3) Մարդը բնութեան ամենազարգացած երեւոյթն է և պէտք է որ այդ կոչման արժանի մնայ. այսինքն մարդ պէտք է աշխատի մարմնապէս և հոգեպէս գիմել դէպի կատարելագործութիւնը. միշտ զարգանալ, երբէք յետադիմել:

4) Մարդկութիւնը կարելի է բաժանել երկու մեծ խմբերի. «ելիքտրական» և «մագնիսական» տէմպերամենտ ունեցողները: Սա անմիտ է թուում: Մազդադնանը «ելիքտրական» և «մագնիսական» ասելով հասկանում է այն ինչ որ սովորաբար ընդունուած է հոգեբանութեան մէջ կոչել extravertif և introvertif.

5) Ընդունակութիւնների տեսակէտից մարդկային տիպերը կարելի է վերածել երեք կոմպօնէնտներին՝ 1) մատէրիէլ, 2) սպիրիտուէլ, 3) ինտէլլէկտուէլ: Այս բաները չպէտք է ամենի սովորական նշանակութեամբ: Բնորոշենք.

ա) Մատէրիէլ կոչուում են այն անհատները, որոնք մտաւոր ընդունակութիւններ չունին, այլ ծնուած են ուժեղ մարմնով, փոքր կանգով, կեանքի նիւթական մասում աշխատելու համար:

բ) Սպիրիտուէլ ասելով մազդ. խօսակցութեան մէջ հասկացում է վառ երևակայութիւն և ստեղծագործող ընդունակութիւն ունեցողները. բանաստեղծ, նկարիչ, արձանագործ կլին, կլին., մի խօսքով նրանք, որոնք զգացմունքներին աւելի լայն տեղ են տալիս քան դատողութեան: Այս անհատների կանգի ամենազարգացած մասը գագաթն է (երևակայութեան կենտրոնը):

գ) Զարգացման բարձրագոյն աստիճանին կանգնում է ինտէլլէկտուէլը, դատողութեան մարդը (գիտնական, ինժեներիէր...)

լայն, զարգացած ճակատով ու կրծքով:

1) Die natürliche Entwicklung des Charakters von Dr. med. Müller, Leipzig Mazd.—Verlag.

Այս երեքը գատ տիպեր են. ամեն մարդ այս երեքիցն էլ ունի. նայած թէ որ կոմպոնենտն է գերիշխում, մարդ պէտք է դրա համեմատ և զբաղմունք ընտրի:

6) Դոդմանների մէջ կարևոր տեղ է բռնում դուալիզմը: Չի խօսուում այլևս ոչ Որմիզդի և ոչ էլ Ահրիմանի մասին. բայց ընդունում է որ մարդու մէջ կան չարի և բարիի պրինցիպները, որ միշտ իրար հետ մրցման մէջ են:

Իբրև նմանութիւն Մազդազնանի և Մազդէականութեան մէջ յիշենք նաև երեք կարգերի գոյութիւնը: Սա ոչ թէ դոգմատիկ այլ կազմակերպական գոյն ունի: Ինչպէս զբաղաշտական քուրմը մօբեդ դաւանալու համար անցնում է Նուզուդ, Նարբը և Մարատիր աստիճաններով, նմանապէս կատարեալ մազդազնական լինելու համար պէտք է անցնել 3 որոշ շրջաններով: Երրորդ շրջան ընդունւում են բոլոր նրանք որոնք վարդապետութեանը համակրում են և բուսակեր են: Մի տարի 3-րդում ֆալուց յետոյ մարդ կարող է անցնել 2-րդ շրջան. այն ժամանակ պէտք է վարդապետութիւնը լաւ ճանաչել և լաւ գործադրել: Երկրորդից նրանք են յառաջին կարգ անցնում, որոնց կեանքի միակ նպատակն է ծառայել Մազդազնանին: Դրա համար պէտք է թոյլտուութիւն ինչդրել կայացրիցից: [Ի դէպ է յիշել, որ Մազդազնանին ծառայող անհատները պէտք է մի արհեստ ունենան և իրենց աշխատանքով ապրեն]:

Մենք ցուցադրեցինք անկեղծօրէն այն, ինչ որ մազդազնականները քարոզում են հերոպական մօտ 40 քաղաքներում. մանաւանդ մեծերում գտնում են լաւ յաջողութիւն: Բայց միթէ մեր այս ասածները 20-րդ դարու հասկացողութիւններ չեն: Արդեօք Աւեստայում այդպէս գիտական ոգի է իշխում: Դր. Հանիշը ասում է թէ Մազդազնանը Չարադաշտի իսկական վարդապետութիւնն է, որ մինչև այսօր պահուել է պարսիկ զբաղաշտականների մօտ: Բայց մենք դիտենք որ Պարսկաստանի զբաղաշտականները այդ գիտական ոգուց շատ հեռու են. . . . Նրանց սովորութիւնները, բարքերը, մեքենայական են դարձել (ինչպէս բոլոր կրօնները) . . . Բայց հետեանալը մեզ լաւ յայտնի է. Դր. Հանիշը, որ Մազդազնանի հեղինակաւոր մարգարէն է, ուսանել է փիլիսոփայութիւն, շատ զարգացած մարդ է և քաջ ծանօթ է բնական գիտութիւններին ու հոգեբանութեան նոր գիտութիւն. . . . Այնպէս որ Մազդազնանի մանրամասնութիւններին լաւ ծանօթանալով մարդ գալիս է այս հերոպացութեան. դարաւոր փորձերով ապացուցուած արեւելեան մի օտար բարեւ, քաղցրորդ դարի գիտական

մաղով անցնելուց յետոյ, ներկայացուել եճ Եւրոպայի հասարակութեան:

Մագդազնանի յաջողութիւնը ցոյց է տալիս մեզ թէ ինչպէս գիտական ոգին թափանցում է ամբողջի որոշ խաւերը:

Վարդուհի

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՅԻՊԼԻՆԱՆԵՐ ԵՒ ԼԵԶՈՒ*)

Լեզուաբանական դիսցիպլինաներ ասելով մենք հասկանում ենք «ներածութիւն ի լեզուաբանութիւն» (կամ «լեզուաբանութեան ներածութիւն»), «ընդհանուր լեզուաբանութիւն» կամ «լինգւիստիկա» (լեզուի գիտութիւն», ЛЯУКА О ЯЗЫКѢ) և պատմական լեզուաբանութիւն» ուսումնները: Առաջին և երկրորդը նոր գիտութիւններ են, կարելի է ասել՝ մեր աչքի առաջ են կազմում և հանդէս գալիս, մինչդեռ երրորդը՝ պատմական լեզուաբանութիւնը համեմատարար հին է և ունի իրեն որոշ սահմանները:

Լեզուաբանութեան ներածութեան նպատակն է՝ ուսումնասիրել լեզուի ընդհանուր ձևական սկզբունքները, լեզուի, այսպէս ասած, տարրերը և պարագաները. տալ լեզուային երևոյթների տեսական սլաակները, կցելով դորան նաև լեզուի այլևայլ ձևերը (resp. տեսակները), որոնք արձանագրուած են անցեալում և ներկայումս: Դորանով այդ առարկան, իրաւամբ «ներածական» կոչուելով, հող է պատրաստում և հիմք ծառայում լեզուի բոլոր մանրամասնութիւնները ծաւալօրէն բարունելու. դորձնականապէս այդ «ներածութիւնը» զարթեցնում է մեր մէջ որոշ «լինգւիստական» հոտառութիւն, ստեղծում է ներգործական և քննողական վերաբերմունք դէպի «լեզուային աշխարհի» այլևայլ երևոյթները. այդու նկատմամբ շատ տարօրինակ պէտք է թուի սմանց կարծիքը, թէ մարդկային ուղեղը նման է թերթի, գրատախտակի, ֆօնոգրաֆի կայլն, մի խօսքով մի tabula rasa է, որը կրաւորապէս է ընդունում արտաքին տպաւորութիւնները:

Երկրորդ լեզուաբանական ուսումը այդ «ընդհանուր լեզուաբանութիւն» կամ, ինչպէս ասում են, «լեզուի գիտութիւնն» է (linguistica, ЛЯУКА О ЯЗЫКѢ), որի բովանդակապէս յայտ գալը ղեւ վաղաժամ պէտք է սեպուի. դորա միակ նպատակ ու խնդիրն է՝ յենուելով լեզուի անցեալ ու ներկայ երևոյթների ուսումնասիրութեան վերայ՝ լուսարանել թէ ինչ պայմանների և օրէնքների հիման վերայ են չաղկապուած այդ դիտելի երևոյթները և իրար հետեում, լինին այդ պայմանները և օրէնքները սահմանափակուած

*) Յարցելի պ. Ղափանցեանի (Ճեմարանի ուսուցիչ) յօգուածի ուղղագրութիւնը և լեզուն, իւր խնդրանօր, Թղեցիք անփոփոխ: Խմբ.